ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ Ն 409 -Ա
« 18 » դեկտեմբերի 2024թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 370-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի նոյեմբերի 20-ի «Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու, միացման պայմանագիրը, «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության և «Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հաշվապահական հաշվեկշիռները, «Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտը և ընկերությունների կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի փոխարկման կարգը, միացման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 370- Ա որոշման 3-րդ կետի 3-րդ մասի «հոկտեմբերի 1-ի» բառերը փոխարինել «դեկտեմբերի 19-ի» բառերով.
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր